DOI: https://doi.org/10.59630/25792644-2025.1.28-28

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՅՈՒՂԻ ԱՌՕՐՅԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
gayane.ghazaryan.1992@mail.ru

Բանալի բառեր – Հայրենական Մեծ պատերազմ, հետպատերազմյան իրականություն, գյուղական առօրյա, չարաշահումներ, կոլտնտեսային կյանք, սոցիալ-տնտեսական վիճակ

Ներածություն

Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը ԽՍՀՄ-ում ապրող ժողովուրդներին հեշտությամբ չտրվեց։ Տեսած արհավիրքներից և ապրած ծանր կյանքից հետո նրանց համար սկսվեց թեպետ խաղաղ, սակայն հետպատերազմյան խնդիրները հաղթահարելու մի երկարատև ժամանակաշրջան։

Երկիրը նախապատերազմյան մակարդակին բերելու, իրավիճակը բարելավելու և կայունացնելու նպատակով 1946 թ. մարտին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում հաստատվեց ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946-1950 թթ. հնգամյա պլանը, որի հիմնական խնդիրներն էին՝ վերականգնել երկրի տուժած շրջանները, հասնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակին, և այնուհետև, զգալի չափերով գերազանցել այդ մակարդակը[1]։ Չորրորդ հնգամյա պլանի խնդիրների իրականացման համար հանրապետության տնտեսության մեջ ներդրվեց 283 միլիոն ռուբլի.

գրեթե նույնքան, որքան երկրորդ և երրորդ հնգամյակների բոլոր ներդրումները: Այդ միջոցների մեծ մասը մեծապես ուղղվեցին արդյունաբերության զարգացմանը[2]: Մեծ ներդրումների շնորհիվ սկսվեց ձեռնարկությունների վերակառուցումը, վերագործարկումը և նոր գործարանների կառուցումը: Արդյունաբերական ձեռնարկությունների համար մեծ օգնություն եղան Գերմանիայից որպես ռազմավար ներկրված սարքավորումները[3]: Այս ամենը չէր կարելի ասել գյուղատնտեսության դեպքում: Հոդվածը անդրադարձ է կատարում հետպատերազմյան գյուղական առօրյային, ներկայացնում գյուղում տիրող իրավիճակը՝ և՛ սոցիալ-տնտեսական և հոգեբանական առումով:

Չարաշահումների պրակտիկաները

Հետպատերազմյան տարիներին կապիտալ ներդրումները տնտեսության հիմնական ճյուղերի՝ գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ անհամաչափ էր բաշխվում[4]: Բացի այդ, ոլորտում էական բարեփոխումներ չկատարվեցին: Այսինքն՝ կրկին, ինչպես նախապատերազմական շրջանում, այնպես էլ պատերազմական և հետպատերազմական ժամանակ, ծանրության կենտրոնը շարունակեց մնալը գյուղը՝ իր ապրանքների մթերումներով: Այս ամենին գումարած պատերազմի ժամանակ և հետո մեծ չափերի էր հասել հանրային ունեցվածքի հափշտակումները, շռայլվում էին աշխատանքները, տեղական ղեկավար մարմիններն իրենց թույլ էին տալիս արտոնություններ:

---

[1] **Խարմանդարյան Ս.,** Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին (1946-1950), Երևան, 1960, էջ 37:

[2] Հայոց պատմություն, հատոր IV, գիրք II, Երևան, 2016, էջ 6:

[3] **Խաչատրյան Կ.,** Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922-1991), Երևան, 2015, էջ 147-157:

[4] **Կոխլիկյան Ա.,** Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայկական ԽՍՀ գյուղում 1945-1965 թթ., պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, էջ 23-24:

Այս իրավիճակում ԽՍՀՄ նախարարների խորհուրդը և ՀամԿ(բ)Կ կենտկոմը 1946 թ. սեպտեմբերի 19-ին որոշում ընդունեցին «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին»: Ղեկավար և պատասխանատու բոլոր մարմիններին հանձնարարվեց միջոցներ ձեռնարկել կանոնադրության խախտումները վերացնելու նպատակով[1]: Սկսվեցին իրականացվել լայնածավալ ստուգումներ: 1946 թ. Հայկական ԽՍՀ ներքին գործերի մինիստրության Շամշադինի շրջանային բաժանմունքի պետը Հայկոմկուսի Շամշադինի շրջանային կոմիտեի քարտուղարին ուղարկած գրությունում իրազեկում էր Մովսես գյուղից՝ կոլտնտեսության վերաբերյալ ստացած տեղեկությունների մասին: Կոլտնտեսությունում կատարվել էին խոշոր չափի դրամական յուրացումներ՝ մոտ 50000 ռ., այնուհետև կար մոտ 10 տ. հացահատիկի պակասորդ, մթերքների մեծ քանակի պակասորդներ և վատնումներ: Կասկածանքները միտված էին նրան, որ այդ յուրացումները և շռայլումները պայմանավորված կարգով կատարել են կոլտնտեսության սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղարը, կոլտնտեսության հաշվապահը և պահեստապետերը: Բաժանմունքի պետը շրջանային կոմիտեի քարտուղարին խնդրում էր հատուկ հանձնաժողովի միջոցով ստուգման ենթարկել Մովսես գյուղի կոլնտեսության հաշվապահությունը[2]: Նմանատիպ գրություն կար նաև Հախում գյուղի կոլտնտեսության վերաբերյալ: Այս անգամ արդեն ունեցվածքի շռայլումներ էր կատարել հենց կոլտնտեսության վարչության նախագահ Վասիլ Մաճկալյանը: Նա ցորեն էր վաճառել անգամ այն պարագայում, երբ Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ մինչև հացամթերման պլանի լրիվ կատարումն արգելված էր հացամթերքի վաճառքը: Կոլտնտեսության նախագահը պահես-

[1] Նույն տեղում, էջ 18:
[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 12, ց. 1, գ. 455, թ. 44 և շրջ.:

տից պահեստապետ Վարսիկ Եղիկյանի միջոցով 36 հատ եգիպտացորեն էր տվել գյուղի բնակիչ Վարսենիկ Բաբայանին՝ փոխարենը նրանից գնելով 2 լիտր օղի[1]։ 1946-1947 թթ. Հախում գյուղի կոլտնտեսությունը ստուգման էր ենթարկվել, որի ընթացքում հայտնաբերվել էր մեծ քանակությամբ պակասորդ, ինչի առթիվ կազմվել էր արձանագրություն[2]։ Այստեղ հետաքրքիր է այն հանգամանքը, որ շրջանային կոմիտեի քարտուղարին ուղղված նամակներում[3] գյուղի բնակիչները պաշտպանում են չարաշահում կատարած իրենց նախագահին, խնդրում են նրան թողնել կոլտնտեսության վարչության նախագահի պաշտոնում, որովհետև շատ սիրում և հարգում են, մեծ հեղինակություն է վայելում գյուղում։ Պատերազմի ծանր տարիներին նա կարողացել էր գյուղը փրկել սովից ու քայքայումից։ Հետաքրքիր է նաև Վ. Մաճկալյանի անձնական նամակը՝ ուղղված Շամշադինի շրջկոմի քարտուղարին, որտեղ արդարանում է և խնդրում ներել իրեն, բայց միևնույն ժամանակ խոսում է նաև իր «անբարեխիղճ» ընկերների մասին, որոնք նույնպես մեղավոր են կատարվածի մեջ։ Այսինքն՝ վստահ գյուղացիների աջակցության վրա, նա բացահայտում էր նաև իր հանցակիցներին[1]։ Ընդ որում, այդպիսի նամակները (հատկապես անանուն) շատ տարածված էին։ Ներքին գործերի մինիստրության աշխատակիցները մեծամասամբ դրանց հիման վրա էին ստուգումներ իրականացնում։

1946 թ. մեկ այլ փաստաթղթում մեղադրվում էր Վեդու շրջանի Արմաշ գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ Ասլան Մալխասյանը, ով իր հովանավորության տակ էր վերցրել գյուղի պահեստի մթերքները յուրացրած, նույն գյուղի բնակչուհի Եվգինե Գամջյանին և նշանակել կոլտնտեսության պահեստապետ։ Պահեստապետը նույնիսկ դիմում էր ներկայացրել կոմունիստական կու-

[1] Նույն տեղում, թ. 58 և շրջ.։
[2] ՀԱԱ, ֆ. 12, ց. 1, գ. 473, թ. 11-14։
[3] Նույն տեղում, թ. 16։

սակցության շարքերն անցնելու համար, ինչը ողջունվել էր կոլտնտեսության նախագահի կողմից։ Այս հանգամանքը մեծ վրդովմունք էր առաջացրել գյուղացիների շրջանում[2]։

Շատ դեպքերում, սակայն, կատարվող ստուգումները ձևական բնույթ էին կրում։ Երբեմն հենց ստուգողն էր տեղական ղեկավար գործիչներին դրդում շրջանցելու օրենքը, կատարում գողություն կամ հափշտակություն։ Այսպես, օրինակ, Շամշադինի շրջանի Բերդ գյուղի գյուղատնտեսական կոոպերատիվի նախկին աշխատակից Աղունիկ Միրզոյանը Ծաղկավան գյուղի խանութը ստուգելու ժամանակ, արդար ստուգում անցկացնելու փոխարեն, ինքն էր խանութից 580 ռ. արժողությամբ ապրանքներ ու դրամ հափշտակել[3]։

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այս կամ այն անձի վերաբերյալ տեղեկատվություն հայտնող, նրանց անօրինական գործողությունների, հափշտակությունների մեջ մեղադրող նամակների հեղինակները հաճախ փորձում էին այդ միջոցով թաքցնել իրենց կատարած անօրինականությունները և հափշտակումները։ Նման մի դեպք տեղի էր ունեցել 1946 թ. Վեդու շրջանում։ Այսպես՝ Հայկոմկուսի Վեդու շրջանային կոմիտեի քարտուղար Ա. Մամեդովին ուղարկած նամակում Վեդու մանկատան մի քանի աշխատակիցներ նույն մանկատան տնտեսվար Զավեն Մուրադյանին մեղադրում էին յուրացումների, երեխաներին ծեծելու և նրանց նկատմամբ սեռական ոտնձգություններ կատարելու մեջ[4]։ Կատարված ստուգումներից պարզ է դառնում, որ տնտեսվարն ընդամենը պայքար է մղել շռայլումների և յուրացումների դեմ, մի քանի անգամ այդ հարցերով վեճ է ունեցել աշխատակիցների, ինչպես նաև՝ դաստիարակների հետ, վիճաբանել է երեխաների դաստիարակության հարցով։ Այդ հանգամանքը դուր չի եկել մանկատան աշխատակիցնե-

---

[1] Նույն տեղում, թ. 17։
[2] ՀԱԱ, ֆ. 1230, ց. 2, գ. 157, թ. 78։
[3] ՀԱԱ, ֆ. 12, ց. 1, գ. 595, թ. 1-4։
[4] ՀԱԱ, ֆ. 1230, ց. 2, գ. 130, թ. 8-9։

ին, և նրանք որոշել են իրենց գործընկերոջ մասին շրջանային կոմիտեի քարտուղարին ուղղված զրպարտչական նամակ գրել[1]։

Սոցիալ-հոգեբանական արձագանքները

Դեռևս նախապատերազմյան տարիներին բնակչության հոսք էր տեղի ունենում գյուղերից դեպի քաղաքներ և արդյունաբերական շրջաններ[2]։ Պատճառներից մեկը կոլտնտեսությունների դաշտերի բերքատվության ցածր մակարդակն էր։ Դա պայմանավորված էր հատկապես անհրաժեշտ գյուղտեխնիկայի և աշխատուժի պակասով։ Ռազմաճակատ մեկնած տղամարդկանց փոխարեն աշխատանքի էին դուրս գալիս հիմնականում կանայք, երեխաներն ու ծերերը։ Դրան գումարվում էին նաև անբարենպաստ կլիմայական պայմանները, ինչի արդյունքում հետպատերազմյան առաջին տարում Խորհրդային Հայաստանում կրճատվեցին ցանքատարածությունները[3], ինչպես նաև խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը։ Ցանքատարածությունները կրճատվում էին նաև շինարարական աշխատանքների պատճառով։ Այսպես օրինակ, 1946 թ. Ղափանի շրջանի Օխչի գյուղի ինտերնացիոնալ կոլտնտեսության նախագահը բողոքում էր, որ կոլխոզը չի կարող իրականացնել աշնանային պլանը, քանի որ մոտ 20-25 հա ոչնչացվել է 1941թ. Ղափան տանող ճանապարհը կառուցելու համար, մի մասն էլ ոչնչացնում են Քաջարանշինի բանվորների անասունները[4]։

Գյուղերում չստացված բերքը պայմանավորվում էր նաև մեքենատրակտորային կայանների տրակտորիստների կատարած աշխատանքով։ Նորատուս գյուղի գյուղացիների խոսքերով՝ տրակտո-

---

[1] Նույն տեղում, թ. 25։

[2] **Ավագյան Գ.,** Հայկական ՍՍՀ բնակչությունը, Երևան, 1975, էջ 191-193։

[3] «Նորատուս»։ Նորատուս գյուղի պատմությունը, (խմբ.՝ Գոհար Մանուկյան), Երևան, 2000, էջ 273-274։

[4] **Հարությունյան Վլ., Ավագյան Գ.,** Քաջարան (Քաջարան քաղաքի պատմությունը), Երևան, 2004, էջ 244։

րիստոները խորը վար չէին կատարում, ինչի արդյունքում քարերը մնում էին հողի երեսին, իսկ մկները դրանց տակ բույն էին դնում։ Դրան գումարվում էր նաև այն հանգամանքը, որ պարարտանյութերը քիչ էին տրվում և ոչ ժամանակին, ինչի հետևանքով ստացվում էր չնչին բերք։ Հետաքրքիրն այն էր, որ շրջանի մեքենատրակտորային կայանը պատասխանատվություն չէր կրում խոտանի համար, բայց նրա աշխատակիցները իրենց հասանելիք վարձատրությունը ստանում էին[1]։

Մյուս խնդրահարույց պատճառը վարձատրության կարգն էր։ Բանն այն էր, որ կոլտնտեսություններում բնամթերային և դրամական եկամուտները բաշխվում էին ըստ աշխօրերի։ Գյուղերում կոլտնտեսականները տարվա ընթացքում աշխօրի դիմաց չէին վարձատրվում, բնամթերային և դրամական մուտքերի բաշխումը կատարվում էր միայն տարվա վերջին[2]։ Պատերազմի վերջին տարիներին մասնավորապես լեռնային շրջաններում լինում էին դեպքեր, երբ աշխօրի դիմաց ոչինչ չէին ստանում, կամ շատ չնչին վարձատրություն էին ստանում։ Որոշ դեպքերում բրիգադիրները հաշվապահությանը չէին հանձնում կոլտնտեսականների աշխօրերը, երբեմն էլ հենց հաշվապահությունն էր իր վերահսկողությամբ բաշխում առանց այդ էլ քիչ աշխօրերը։ Այդ ամենը պատկերավոր նկարագրում է ներկայիս Գեղարքունիքի մարզի Արծվանիստ (նախկինում Վանեվան) գյուղի բնակիչներից մեկը, երբ լսում է բերքի բաշխման կոլտնտեսության գլխավոր հաշվապահի զեկուցումը՝

«Աշխօրին գարի՝ տասնմեկ գրամ,

Ափսոս այս տարի չհասավ դրամ…

Յոթ գրամ կարտոլ, երկու գրամ յուղ, խորշակը զարկեց ու չեղավ պտուղ…

---

[1] «Նորատուս»։ Նորատուս գյուղի պատմությունը, էջ 275-276։

[2] **Կոխլիկյան Ա.,** Բաշխման հարաբերությունները ՀԽՍՀ գյուղում 1945-1965 թթ., «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2004, N 4, էջ 202-203։

Երկու բուռ ցորեն, մի մսխալ մեղր,
Ու այդ միջոցին խեղճ գեղջուկ Հանես,
Մաշված բաճկոնը վրայից հանես,
Եվ գլխից վերև՝ օդում պտտեց…
Երբ հարցմունք արին վարմունքի մասին
Ասաց՝ խառնում եմ ես ալիքները,
Որ այլ երկրների ընդունիչները,
Չբռնեն նման հաղորդումները…»[1]:

Սա նկարագրում է ողջ իրականությունը և, իհարկե, գյուղացի Հովհաննեսի (Հանես) պասիվ դիմադրությունը ստեղծված իրավիճակի առնչությամբ: Ուստի որոշ դեպքերում կոլտնտեսականներն առանց թույլտվության մեկնում էին բանվորական վայրեր: Ինչպես, օրինակ, Չիգդամալի (ներկայիս Արևաշող գյուղ, ՀՀ Լոռու մարզ) կոլտնտեսությունում բերքատվության ցածր լինելու պատճառով բրիգադները աշխօրերն իջեցրել էին 10 , ինչի արդյունքում որոշ ընտանիքներ տեղափոխվել էին այլ վայրեր և գյուղում աշխատող ձեռքի պակաս էր զգացվում[2]: 1946 թ. Ղափանի շրջանի Օխչի գյուղի կոլտնտեսության երիտասարդ և կարող ուժերը գնում էին Քաջարանշինում աշխատելու, քանի որ այնտեղ հացի քարտ էր տրվում և կար կայուն աշխատավարձ[3]:

Գյուղացիների մի մասն էլ բնակվելով գյուղում և օգտվելով տնտեսություններին տրամադրվող արտոնություններից, երկար ժամանակ բացակայում էր գյուղից[1]: Դա, իհարկե, մեծապես խոչընդոտում էր կոլտնտեսային աշխատանքների կազմակերպմանը:

Գյուղացիները փորձում էին անհրաժեշտ գումարի պակասը լրացնել իրենց օժանդակ տնտեսություններից ստացված բնամթերքը վաճառքի հանելով, որպեսզի գնեն հագուստ, և ընտանիքին

---

[1] **Ասատրյան Մ.,** Արծվանիստ, Երևան, 2006, էջ 210:
[2] **Ափուջանյան Ֆ.,** Արևաշող, Երևան, 2009, էջ 183:
[3] **Հարությունյան Վլ.,** Ավագյան Գ., նշվ. աշխ., էջ 244:

անհրաժեշտ տարբեր պարագաներ։ Սակայն կոլտնտեսային շուկաներում գյուղատնտեսական մթերքներն իրացվում էին մեծ դժվարությամբ։ Գրեթե բոլորը վաճառողներ էին, իսկ գնողները շատ քիչ էին[2]։ Հաջորդ կարևորագույն խնդիրներն այն էր, որ կոլտնտեսությունները մթերքները պետությանն էին հանձնում ինքնարժեքից ցածր գներով։ Պետությանը տրամադրվող մթերքների մեկ քառորդից ոչ պակաս մասը նրա վրա անվճար էր նստում[3]։

Իրապես, գյուղատնտեսության բնագավառում բազմաթիվ էին խնդիրներն ու թերությունները։

Կոմունիստական կուսակցության շրջանային կոմիտեների ակտիվի ժողովներում գյուղերի կոլտնտեսությունների նախագահների ելույթներից պարզ էր դառնում, թե հետպատերազմյան առաջին տարում ինչ վատթար դրության մեջ էին գտնվում առանձին գյուղեր։ Օրինակ՝ Իջևանի շրջանային կոմիտեի ակտիվի 1946 թ. ապրիլի 17-ի ժողովում կոլտնտեսության նախագահները բողոքում էին, որ գյուղում ընդհանրապես շինարարություն չէր կատարվում, հաջող բերք չէին ստանում, չորանոցներ չկային, իսկ ծխախոտի մեծ մասը չորացնում էին գյուղացիների բնակարաններում[4]։ Նույն թվականի մարտի 21-ի մեկ այլ ժողովում Սռիգյուղի (ներկայիս Սարիգյուղ, ՀՀ Տավուշի մարզ) կոլտնտեսության վարչության նախագահը նշում էր, որ գյուղի վիճակը ծանր է, մեխ չունեն անգամ, որ չորանոցները նորոգեն, հագուստ չունեն հագնելու, «ուր մնաց ցնցուղ ունենան սածիլանոցները ջրելու համար»[5]։ Գյուղում սով էր ու հագուստի պակաս։ Գյուղացիներից շատերն իրենց երեխաներին դպրոց չէին ուղարկում, փոխարենը ուղարկում էին աշխատանքի։

---

[1] ՀԱԱ, ֆ. 12, ց. 1, գ. 487, թ. 45-48։

[2] **Խոջաբեկյան Վ.,** Ագրարային քաղաքականությունը և գյուղական բնակչության տեղաշարժերը, Երևան, 1989, էջ 19։

[3] Նույն տեղում, էջ 16։

[4] ՀԱԱ, ֆ. 75, ց. 1, գ. 457, թ. 8։

[5] Նույն տեղում, թ. 3։

Նրանք հիմնականում հասկ էին հավաքում[1]։ Բացի այդ, ծնողները հնարավորություն չունեին հագուստ գնելու, ինչի հետևանքով երեխաները պտտվում էին «տկլոր և բոբիկ»[2]։ 1946-1947 թթ. Բերիայի շրջանի Երրորդ գյուղի (ներկայումս Սիլիկյան թաղամաս, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան) բնակչությունը գրեթե սովահար վիճակում էր։ Գյուղացիների ծայրահեղ ծանր վիճակի մասին շրջանային կոմիտեի առաջին քարտուղարին իրենց նամակում պատկերավոր նկարագրում են գյուխորհրդի կազմկոմիտեի նախագահը և կոլտնտեսության սկզբնական կուսկազմակերպության քարտուղարը։ Նրանց նկարագրմամբ գյուղացիների 70-80 %-ը 1947 թ. հունվարի 1-ից ոչ մի գրամ հաց չունեին ուտելու։ Նրանք ուտում էին բացառապես ժմեխ, որը ձեռք էին բերում մեծ դժվարությամբ։ Իսկ եթե ոչ, կարող էին օրերով քաղցած մնալ[3]։

Սոցիալ-տնտեսական ծանր վիճակը փաստում են նաև մեր զրուցակիցները։ 1937 թ. ծնված Ռայա Խուրշուդյանը պատմում է, որ իր մանկության տարիներին Հայաստանի բնակչությունն ապրում էր շատ ծանր պայմաններում։ Փոքր հասակում նա հաճախակի սոված է գնացել դպրոց (մանկության տարիներին բնակվել է Երևան քաղաքում). դպրոց հաճախող երեխաները «նախաճաշի ինչ լինելը չգիտեին»։ Դպրոցից տուն վերադառնալուց հետո երբ ասում էր, որ սոված է, մայրը մի կտոր չոր հաց և թեյ էր տալիս։ Հիշում է, որ երրորդ թե չորրորդ դասարանում էր սովորում, երբ մի անգամ թեյ խմելու մոր հորդորից հետո մի կողմ է հրել գավաթը և բղավել. «Ես էլ չեմ ուզում չայ խմել, զզվել եմ ձեր չայից։ Դրանից հետո մինչև այժմ թեյ չեմ խմում»[4]։ Վեդիում ապրող Լարիսա Ղազարյանը հիշում է իր մայրիկի պատմածը, ով 1946 թ.՝ լինելով փոքրահասակ ե-

---

[1] «Նորատուս»։ Նորատուս գյուղի պատմությունը, էջ 273-274, Սուքիասյան Հ., նշվ. աշխ., էջ 81։

[2] **Սուքիասյան Հ.,** Երրորդ գյուղից մինչև Երևանի Սիլիկյան թաղամաս (պատմություն, տնտեսություն, մշակույթի էջեր), Երևան, 2012, էջ 81։

[3] Նույն տեղում, էջ 83։

[4] Հարցազրույց Ռայա Խուրշուդյանի հետ, 13.10.2024, գյուղ Քուչակ։

ռեխա, տեսել է շան բերանին մի կտոր եփած միս և, ամիսներ շարունակ միս կերած չլինելով, վազել է շան հետևից, խլել միսը և ագահաբար կերել[1]։ Սննդի և հատկապես մսամթերքի պակասի մասին իր գրառումներում խոսում է նաև Բասարգեչարում (ներկայումս Վարդենիս, ՀՀ Գեղարքունիքի մարզ) ազատ աքսորում գտնվող գրող, երգիծաբան Լեռ Կամսարը, ով հումորի վերածելով իր ապրած ծանր վիճակը, գրում էր, որ իր մսաղացը վաղուց միս չի տեսել[2]։

Բացակայում էր տարրական հիգենիան։ Այդ շրջանում, ամենուր տարածված էր ոջիլը։ Կար օճառի պակաս։ Ստացված մի քանի կտոր օճառը ամբողջ ամսվա ընթացքում բնակիչներին չէր բավարարում։ Հագուստը աղքատիկ էր, ոչ շատ գույնզգույն։ Գյուղերում կրում էին տրեխներ, իսկ տղամարդիկ շատ դեպքերում կա՛մ պատերազմից տուն եկած զինվորական հագուստով էին, կա՛մ էլ տելեգրեյկաներով[*]։ Մոլեգնում էին հիվանդությունները՝ հատկապես «քոս»-ը և «տիֆ»-ը։ Վատ էին աշխատում նաև ակումբները։ Այնտեղ ցուրտ էր, սանիտարական վիճակը անբավարար էր, բարձրաձայն ընթերցանություն չէր կատարվում, ինչի արդյունքում բնակչությունը ակումբներում հիմնականում զբաղվում էր նարդի խաղալով[3], կամ ուղղակի, օրեր շարունակ ակումբները փակ էին լինում[4]։ Հատկապես գյուղերը չունեին բավարար չափով խմելու ջուր[5]։ Գյուղերի խանութները վերանորոգված չէին, գտնվում էին ոչ բավարար վիճակում։ Երևանից և մյուս քաղաքներից դուրս եզակի էին հիվանդանոցները, ծննդատներն ու պոլիկլինիկաները։ 1953 թ. Նորատուս գյուղի ծննդատանն իրականացված ստուգումից հետո

---

[1] Հարցազրույց Լարիսա Ղազարյանի հետ, 19.10.2019, քաղաք Վեդի։ Լարիսա Ղազարյանի հետ հարցազրույցն անցկացնելու ժամանակ մայրը՝ Ռոզա Եդիգարյանը (ծնված 1935 թ.) արդեն մահացել էր։

[2] **Լեռ** Կամսար, Չապրած օրեր, Երևան, 2016, էջ 166-167։

[*] Բամբակյա տաք բաճկոն։

[3] Նորատուս։ Նորատուս գյուղի պատմությունը, էջ 278։

[4] **Սուքիասյան Հ.,** նշվ. աշխ., էջ 92։

[5] Նույն տեղում, էջ 93։

պակասեց տատմերների կողմից ծնունդ ընդունելու դեպքերը[1]։ Բանն այն է, որ հատկապես խիստ ձմռանը դժվար էր լինում քաղաքի հետ կապ պահպանել, չկային տրանսպորտային միջոցներ, իսկ գյուղերում դեղորայքը պակասում էր ու շատ դեպքերում ստիպված էին լինում երեխայի ծնունդն ընդունել մոխիրների մեջ[2]։

Կարևոր էր նաև գյուղը կապի միջոցներով ու էլեկտրաէներգիայով ապահովելը։ Իհարկե, որոշակի աշխատանք տարվում էր գյուղերը էլեկտրաէներգիայով ապահովելու նպատակով։ 1948 թ. դրությամբ, օրինակ, էլեկտրաֆիկացվել էր 303 կոլտնտեսություն, բայց դրանք հիմնականում Արարատյան դաշտավայրում էին, իսկ լեռնային ու ծայրամասային շրջաններում շատ քիչ գյուղեր էին, որ էլեկտրաէներգիա ունեին[3]։ Ժամանակակիցների վկայությամբ, նրանք տները լուսավորում էին թոնրի լույսով, որը և լուծում էր տաքության հարցը։ Սակայն աստիճանաբար իրականացվեց գյուղերի էլեկտրաֆիկացումը։ Եվ արդեն 1952 թ. գյուղերի գրեթե մեծամասնությունը ուներ էլեկտրաէներգիա[4]։ Ի տարբերություն էլեկտրաֆիկացիայի՝ գյուղական բնակավայրերում ռադիոհանգույցների կառուցումն ավելի արագ էր տեղի ունենում, ինչը բնակչության մոտ մեծ ոգևորություն էր առաջ բերում[1]։

Հոգեբանական առումով Խորհրդային Միության քաղաքացիները (այդ թվում ազգությամբ հայերը) անցնում էին բարդ և դժվարին փուլերով։ Նրանք հաղթանակած երկրի քաղաքացիներ էին և շատ դեպքերում այդ հաղթանակն իրենց վստահություն ու հույս էր ներշնչում ավելի բարեկեցիկ, լուսավոր ապագայի առումով։ Եվ պատահական չէ, որ հետագայում հայրենիք վերադարձած սփյուռ-

---

[1] Նորատուս։ Նորատուս գյուղի պատմությունը, էջ 297։

[2] Էմիլյա Օհանյանի հարցազրույցը, https://hayrenadardz.org/hy/lifestory/emilya-ohanyan (վերջին մուտք՝ 06.12.2024)։

[3] **Կոխլիկյան Ա.,** նշվ. աշխ., էջ 28։

[4] «Էջմիածին», 1953, փետրվար, էջ 47։

քահայերից ոմանք խոստովանում են, որ ոգևորվել են տեղացիների «Վերջը հաստատ լավ է լինելու» խոսքից և դա նրանց գործելու ուժ է տվել[2]: Բայց և այնպես, բնակչությունը դեռ գտնվում էր հետպատերազմյան սթրեսների ազդեցության ներքո, որն էլ ազդում էր նրանց վարքի և գործունեության վրա: Նրանց վրա ազդում էր նաև տիրող սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակը: Մարդիկ անցել էին պատերազմի բարդ ու դժվարին ուղին: Չկար մի տուն, որն ուղղակի կամ անուղղակի կրած չլիներ պատերազմի ծանրությունը: Ուստի քաղաքացիներն ուզում էին իրենց պետության մեջ կարևորվել, իրենց տված նվիրումի, ներուժի և իրենց որդիների, հայրերի ու եղբայրների թափած արյան դիմաց արժևորվել: Ասվածի օրինակ է 1947 թ. Շիրազլու (ներկայիս Ոսկետափ, ՀՀ Արարատի մարզ) գյուղի սկզբնական կուսակցական կազմակերպության անդամ Սիմոն Մխիթարյանի նամակ՝ ուղղված Վեդու շրջանային կոմիտեի քարտուղար Ա. Մամեդովին: Ներկայացնելով իր անբիծ կուսակցական անցյալը, նամակագիրը խնդրում էր իրեն կարևորել, ինչպես թելադրում է «Լենինի և Ստալինի կազմակերպած կոմունիստական պարտիայի ժամանակաշրջանը»: Նա շեշտում էր այն հանգամանքը, որ իր միակ որդին Հայրենական պատերազմում գիտակցաբար ֆաշիստների դեմ կռիվ է տվել և զոհվել է. «Ճիշտ է հայրենիքի ազատագրումը ամեն ինչից բարձր է, դրա համար նորից ոչ թե ես դժգոհ եմ այդ կորստի համար, այլև հպարտ եմ, որ տղաս կռվեց սովետական ժողովրդի պատվի և Հայաստանի ազատագրության համար: Բայց իմ տնտեսական դրությունը չափազանց վատ է, դրա համար ես ստիպված եղա Ձեզ հայտնելու»[3]: Այսինքն՝ ինքը գրում էր, որ դժգոհ չէ, սակայն նա պետությունից նաև ակնկալում էր օգ-

---

[1] **Սուքիասյան Հ.,** Ղարագյոզյան Ա., Գառնի (հին ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2023, էջ 175-176:

[2] **Բազարյան Մ.,** Նամակներ սովետական «դրախտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին), Երևան, 1996, էջ 198:

[3] ՀԱԱ, ֆ. 1230, ց. 2, գ. 144, թ. 41 և շրջ.:

նություն, նույնիսկ ակնարկով պահանջում և հավակնում այն պաշտոնին, որը տրվել էր, իր խոսքերով, Հայրենական պատերազմում իրեն չարդարացրած, «թշնամու դեմ չկռվող և գերի գնացող Միրան Բայրամովին»[1]: Մխիթարյանը չէր խոսում պարտադրանքով, սակայն ակնհայտ էր, որ նա ակնկալում էր կուսակցության միջնորդությունը. «Ես որպես մարդ աշխատել եմ միայն պարտիայի օժանդակությամբ, հավատացած եմ, որ պարտիան նորից հաշվի կառնի և կօժանդակի այս վիճակից դուրս բերելու համար»: Նա աշխատում էր որպես գյուղի ակումբի վարիչ՝ ստանալով 250 ռուբլի աշխատավարձ: Հետպատերազմյան իրականությունում, երբ մինչև 1947 թ. գործում էր դեռևս պատերազմի տարիներին մտցված քարտային համակարգը, մարդիկ օրական ստանում էին 300 գրամ սև հաց: Մթերքների գները բավական թանկ էին: Բնական է, 250 ռուբլի ստացող անձնավորությունը բողոքում է իր սոցիալական վատ դրությունից, այն պարագայում, երբ 450 ռուբլի ստացած բանվորը ևս բողոքում էր իր վիճակից[2]:

Բայց և այնպես, խորհրդային քաղաքացիները լցված էին մեծ հույսով և հավատով: Հատկապես երիտասարդությունը, որն արժևորում էր պետության տված հնարավորությունը՝ ստանալ անվճար կրթություն: Բեյրութից Խորհրդային Հայաստան տեղափոխված Սուրեն Բուրսալյանը հետագայում խոստովանում է, որ խորհրդային ժողովուրդը ամենաընթերցասեր ժողովուրդն է[3]: Նրա կինը՝ Սյուզան Բուրսալյանը, պատմում է. «Հայաստանի երիտասարդությունը, մանավանդ՝ այն ժամանակվա, հոգեպես շատ ավելի

---

[1] Ընդ որում գերության մեջ եղած անձիք բավականին դժվարությունների միջով էին անցնում: Նրանք վստահություն չունեին կուսակցության մոտ, նրանց դժվար էին ընդունում կոմունիստական կուսակցության շարքերը, կամ առավել հաճախ չէին ընդունում: Նրանց նկատմամբ անթաքույց վատ վերաբերմունք ունեին հատկապես տեղական ղեկավարները: Նրանց տեղի-անտեղի պիտակավորում էին, մինչև իսկ անվանում «նեմեց», այսինքն՝ գերմանացի:

[2] ՀԱԱ, ֆ. 46, ց. 5, գ. 422, թ. 4-5:

[3] **Բուրսալյան Ս.,** Ամորձատված սերունդ, Լոս Անճելես, 1993, էջ 41-42:

հարուստ էր, քան հայրենադարձ երիտասարդները, որոնք հիմնականում արհեստավորներ էին այդ տարիներին, իսկ Հայաստանում երիտասարդների մեծ մասը սովորում էր: Երբ որ հավաքվում էինք, խոսում էինք գրականությունից, երաժշտությունից»[1]: Մարդկանց հոգեվիճակն ուղիղ համեմատական էր կյանքի որակի լավացմանը և պատերազմական սթրեսի հաղթահարմանը:

Եզրակացություն

Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան առօրյան ձևավորվեց Հայրենական մեծ պատերազմի հետևանքների ազդեցությամբ: Քայքայվել էին տնտեսության հիմնական ճյուղերը՝ արդյունաբերությունը, և հատկապես, գյուղատնտեսությունը: Գրեթե բոլոր բնագավառներում առկա էին խնդիրներ ու թերություններ: Մասնավորապես գյուղական բնակչությունն ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ: Երկրում տիրում էր սով, մոլեգնում էին հիվանդությունները: Բացակայում էին հիգիենայի տարրական պայմանները: Իսկ հոգեբանական առումով նրանք անցնում էին բարդ և դժվարին փուլերով: Ճիշտ է, հայաստանցիներն իրենց ընկալում էին իբրև հաղթանակած խորհրդային երկրի քաղաքացիներ, ու դա շատ դեպքերում նրանց ավելի լավ ու բարեկեցիկ ապագայի վստահություն և հույս էր տալիս: Սակայն բնակչությունը գտնվում էր հետպատերազմյան սթրեսների ազդեցության տակ ու շատ դեպքերում նրանց վարքն ու գործունեությունը պայմանավորված էր հենց այդ հանգամանքներով:

Гаяне Казарян, Повседневность советско-армянского села в период послевоенного востоновления - Послевоенная реальность была сформирована последствиями Великой Отечественной войны. Насе-

[1] Սյուզան Բուրսալյանի հարցազրույցը, https://hayrenadardz.org/hy/lifestory/suzan-bursalian (Վերջին մուտք՝ 15.10.2024):

ление пережило сложные психологические этапы и долгие испытания по улучшению социально-экономического положения. Положение дел в стране ухудшилось после войны. Аппарат государственного управления функционировал крайне слабо. Армянское село, взявшее на себя значительную часть бремени, пыталось преодолеть вновь возникшие и возникшие до войны проблемы. В селе, как и во всей стране, усилились коррупция и злоупотребления, что ещё больше осложнило ситуацию. Люди испытывали трудности с поиском работы. В деревнях не хватало необходимого оборудования для улучшения повседневной жизни сельских тружеников. Накопившиеся проблемы не только не нашли решения, но и усугубились. Хотя Советский Союз вышел из войны победителем, сельская жизнь в Армении нуждалась в стабилизации и организации для преодоления возникших трудностей. Особенно это касалось семей участников войны или погибших, большинство из которых надеялись на улучшение своего положения, но во многих случаях не получили должного внимания со стороны государства, и их ожидания не оправдались. Население находилось под влиянием послевоенных стрессов, и во многих случаях его поведение и образ жизни определялись этими обстоятельствами.

Gayane Ghazaryan, Daily Life in Soviet Armenian Villages in the Postwar Reconstruction Period – The postwar reality was shaped by the lasting consequences of the Great Patriotic War. The population endured a prolonged struggle to improve its socio-economic conditions and to overcome difficult psychological stages. The overall condition of the state deteriorated after the war, and the administrative system functioned with considerable weakness. The Soviet Armenian village, which had shouldered much of the postwar burden, sought to overcome both newly emerged and prewar challenges.

In the villages, as throughout the country, corruption and various forms of abuse had become more widespread, further aggravating the situation. Employment opportunities were scarce, and rural communities lacked the necessary equipment to improve the everyday conditions of agricultural workers. As a result, the existing problems not only remained unresolved but continued to accumulate.

Although the Soviet Union emerged victorious from the war, the rural environment of Soviet Armenia still needed to stabilize and reorganize in order to overcome the emerging challenges. In particular, the families of those who had participated in or perished during the war—many of whom expected an improvement in their living conditions—often did not receive adequate state support, and their expectations remained unfulfilled. The population remained under the influence of postwar stress, and in many cases, their behavior and way of life were shaped by those circumstances.

Ուղարկվել է խմբագրություն 06.10.2025թ.
Գրախոսվել է 10.10.2025թ.
Ստորագրվել է տպագրության 15.10.2025թ.